

Կրկին սպրդեալ Տրով Զարդէշեան՝
Տոբորէր զիմ՝ հարսն յիմ՝ վայր հանգստեան
Ո՛հ, այն ո՛չ զօրէր՝ թէ յեջմիածին՝
Հաստէր հարսինս Գաճ և ո՛չ ի Դըվին.
Ընդ եհաս նմա օձն սկզբնաշար
Եւ իւր դարանօք եղև ոտնհար
Ետես Վիշապն այն՝ զի Վարդան, Վահան՝
Ի վերայ չարեաց եղեն յաղթական,
Հեղ ի բերանոյն հոսանս իբրև ջուր.
Մինչ ընդ ջրով թաքէր ամենակէզ հօր,
Ընդ տուան հարսինս թեք արծրային,
Թռչիլ յանջրդիս և թողուլ զորդին,
Մինչ այս նորածին ամբարձաւ առ գաճ
Բարձրելոյն՝ յօձին փնասուց կալ անաչ.
Ընդ երկար տեւեաց մեր պանդխտութիւն
Օձն ամենուրեք հասոյց զիւրն թուն,
Մինչև եզիտ հարսնս զոյզն անդօրր յԱնի
Ուր վաղեն սրահոս ջուրք Ախուրանի,
Այլ ոչ անդ յԱնի, և ո՛չ յամուր Սիս՝
Տեսաւ անձկալի հանգիստ Միածնիս,
Յամենայն տեղիս գտաւ վեհարան,
Այլ ոչ ուրուք ձեռն կանգնեաց ճեմարան,
Թէպէտ անդ ի Սիս ծաղկեցաւ ներսէս,
Յերկոտասանից Աստեղաց հանդէս,
Եւ բոլորեցաւ պըսակ իմ՝ հարսին,
Բայց ո՛չ կերտեցաւ հանգիստ իմ՝ անձին,
Իսկ մինչ մերձեցաւ կէտ հազարամեան
Իմ և հար ին իմ՝ վճռարանդութեան,
Փոխադրեցի յետս զհարսն իմ՝ վերսին,
Եւ նորոգեցի զիմ՝ Եջմիածին,
Զօմանս ի նորին նոր հայրապետաց
Հաղորդս կացուցի իմաց սուրբ կամաց,
Ազգեցի կերտել հանգիստ իմ՝ անձին,
Զի անդ բնակէի Որլիս Միածնին,
Ո՛չ ոք յայնցանէ ետ հրաժեշտ անախ . . .

Այլ հինգ դար յոյս իմ՝ յայտնեցաւ սնտոխ,
Բայց դու՛ որ հանգսն հրաժարեալ որդւոյ՝
Չէիր ուխտեալ զիմ՝ առնել կամս Հօր քոյ.
Ուշ ի կուրծս առեալ չոքար իմ՝ այգին,
Կերտեցեր Իմուսն ճեմարան անձին,
Վասն այն խոստանամ միշտ անդ իջանել,
Ընդ Հօրս և Հորդոյն իջեան առնել,
Եւ զՎաղարշապատ գերթ ճրբագ վառեալ՝
Դընել յաշտանակ զուտ յոսկւոյ ձուլեալ.
Ես ի Պրպոնտոս գրեզ նախ տեսի,
Ապա ի յորձանս Կոստանդեան Պօլսի.
Որպէս ի նախնուքս՝ յառաջին դարու
Չեկի յեղեմիա՝ ի կոչ Արգարու,
Բայց յետոյ իջի ի Վաղարշապատ,
Զի անդ տնկեցից զիմ՝ ծառ կենարմատ.
Նոյնպէս անդ չհուտ քեզ կալ հաստատուն,
Զի չէր Միածնիս անդ պանծալի տուն.
Ի թիկնամէջս իմ՝ բարձեալ զիմ՝ որդեակդ՝
Բերի յայս յինէն քեզ շնորհեալ վիճակդ.
Զի հզօր քո աջով կանգնեալ ճեմարան,
Հօր Իմաստութեանս ասցես օթեան,
Ես աստ բնակեցայ՝ զի՛ նդ այս հաճեցայ,
Որպէս Գրիգորիս երեսն խոստացայ,
Եւ քեզ երկրորդեմ՝ զուխտ իմ՝ յաւիտեան
Պահել պահպանել զՈրդւոյս ճեմարան.
Եւ քեզ վարձ յինէն այս է աւասիկ,
Զոր ուխտեմ առ իմ՝ զաւակդ անդրանիկ,
Թիւ առաքելոցս էր երկոտասան,
Պաղոսիս եհաս և յերեքտասան.
Պրտակ իմ՝ հարսին յաստեղաց կազմել
Անուամբ ներսիս էր ցարդ բոլորեալ,
Բայց Գէորգ անուոնդ չքնաղ նոր զօհար
Յաւելցի ի պսակ անդ աստեղաշար:

ԵՆԲՐԱՅՆԻ ԳԱՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ . . .

ՉՄԹԱՆ ԵՂԱՆԱԿ .

Ո՛ւր են աւուրք դարնանային անուշիկ՝
Որում փշէր զեփուռն հանդարտ ու հեղիկ,
Այն գեղազուարճ կարմրիկ օրերն այժմ ո՛ւր են,
Ո՛ւր է նաև մեր կենսատուն — օդ քաղցրիկ:

Ուր է սիրուն զարնանայինն առաւօտ
 Եւ ճշտափայլ պայծառ արփին անաղօտ,
 Եւ լռեցին արդեօք արտուան և սոխակ.
 Մի՞թէ լցաւ նոցա փափազն ու կարօտ:
 Աշուժավառ երիտասարդքն հիմ աղպէս՝
 Տխուր դիմօք ծածկին ի յարկս անաես.
 Չայնք նուազաց էր ոչ լին ներդաշնակ,
 Չիցէ նոցա տխուր թուի այս հանդէս:
 Եւր ես տխուր կանաչադարդ դու դաշտիկ,
 Ուր են քո թուփք՝ և գոյնզգոյն քո ծաղիկք.
 Եւն կապտագոյն փոքրիկ պսակդ *) ուր դնաց,
 Եւր չերեւի սպիտակագոյնդ Շուշանիկ:
 Ծաղկափթիթ դու հովիտ լայնատարած,
 Բնութեան շքեղ և հիասքանչ արարած,
 Ուր են անմեղ քո բնակիչք — զառն և ուլ,
 Օ՛րնդ լռէ նոցա վարող խաշնարած:
 Եւա՛ղ, ամենքն զուրկ են այժմ այդ փառքից,
 Ու այելլութիւնքն անհետացան մեր երկրից.
 Պատեց աշնարհ մառախլապատ մութ ամպեր,
 Լչ չի ծագում պայծառ արփին երկնքից:
 Երարածոց տիրեց խորին լուսթիւն,
 Տիեզերքից պակսեց՝ զնաց ցնծութիւն.
 Ի բաց գնացին չքնաղ աւուրք ամարան,
 Եւ հեռացաւ սրտից մերոց բերկրութիւն:
 Բայց կուգայ ժամ, կընորոգուին այն օրեր,
 Կըկանանչին կրկին դաշտք և խոր ձորեր,
 Մարդը դարձեալ իւր բերկրալի հրճունքով,
 Կերգէ մեղմիկ իւր սիրուն և քաղցր երգեր:
 Եմենեցուն քաջ յայտնի է և այս բան,
 Որ աշնարհս է ունայն միշտ և փոփոխկան.
 Ուրեմն փառք տանք տիեզերաց Երարչին,
 Որ մեզ պահէ միշտ անփառանգ՝ անսասան:

ԱՂԵՐՍԱՆՉԻ ՄԻԹԱՐԵՆԱՆՏ.

ԾԱՆՈԹԱՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

(*) Մանուշակ ծաղիկը.